

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ-ի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ Անկախության միջազգային ստանդարտները)» (ՀԷՄՄ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄ կանոնների:

Մենք հավատում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել նրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանն դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,


- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

30 հունիս, 2023թ.

Վահագն Սահակյան FCCA
Տնօրեն



Սերգեյ Յակովլև, FCCA
Առաջանդրանքի ղեկավար

«ԱՐԱՐԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31/12/2022 հազար դրամ	31/12/2021 հազար դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	5	5,034,634	5,239,633
Ոչ նյութական ակտիվներ		20,578	24,299
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	6	59,943	-
Տրված փոխառություններ	7	187,854	-
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ		-	87,127
Անշարժ գույքի ձեռքբերման իրավունք		201,823	-
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով		28,813	28,287
Հետաձգված հարկային ակտիվ	15	57,412	51,011
		5,591,057	5,430,357
Ընթացիկ ակտիվներ			
Վաճառքի համար պահվող հիմնական միջոց		-	118,426
Պաշարներ	8	902,923	672,413
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	297,590	402,818
Տրված փոխառություններ	7	33,510	49,919
Ավանդներ	10	247,443	243,552
Դրամական միջոցներ	11	791,663	1,052,858
		2,273,129	2,539,986
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		7,864,186	7,970,343
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	12.1	3,979,983	3,566,112
Հետգնված կապիտալ		(161,384)	(287,185)
Կուտակված շահույթ		1,619,862	2,051,430
		5,438,461	5,330,357
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	13	404,281	517,231
Վարձակալության գծով պարտավորություն		-	3,832
Ակտիվներին վերաբերող շնորհ	14.1	920,038	1,152,187
		1,324,319	1,673,250
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	13	115,336	104,942
Վարձակալության գծով պարտավորություն		-	26,405
Եկամուտներին վերաբերող շնորհ	14.2	425,550	235,899
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	560,520	480,693
Շահութահարկի գծով պարտավորություն	16	-	118,797
		1,101,406	966,736
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		7,864,186	7,970,343

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 30-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:



Սուսաննա Գևորգյան
Գլխավոր հաշվապահ



«ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2022 հազար դրամ	2021 հազար դրամ
Հասույթ	17	5,419,000	5,859,521
Ինքնարժեք	18	(5,753,643)	(4,989,588)
Համախառն շահույթ		(334,643)	869,933
Վարչական ծախսեր	18	(591,766)	(554,762)
Այլ եկամուտ	19	1,416,133	803,191
Այլ ծախսեր	18	(135,430)	(72,866)
Գործառնական շահույթ		354,294	1,045,496
Ֆինանսական եկամուտ	20	20,476	18,954
Ֆինանսական ծախսեր	20	(60,092)	(40,486)
Այլ օգուտ/(կորուստ) զուտ		30,519	(23,227)
Շահույթ մինչև հարկումը		345,197	1,000,737
Շահութահարկի գծով ծախս	16	(63,185)	(169,078)
Տարվա զուտ շահույթ		282,012	831,659
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		282,012	831,659

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 30-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Արման Բաբլոյան
Տնօրեն

Սուսաննա Գևորգյան
Գլխավոր հաշվապահ



«ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	2022	2021
Ծնթ. հազար դրամ հազար դրամ		
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	5,568,580	5,756,455
Նվիրատվությունից մուտքեր	40,189	60,144
Վարձավճարներից մուտքեր	39,315	30,602
Այլ մուտքեր	19,536	19,097
	5,667,620	5,866,298
Վճարումներ աշխատավարձի գծով	(2,363,590)	(2,249,236)
Նյութերի և դեղերի գծով վճարումներ	(1,282,868)	(1,127,157)
Ծառայությունների գծով վճարումներ	(481,544)	(567,308)
Վճարված շահութահարկ	(188,382)	(27,500)
Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ	(860,415)	(722,953)
Այլ ելքեր	(30,275)	(42,134)
	(5,207,074)	(4,736,288)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսք	460,546	1,130,010
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Տրամադրված փոխառություններից մուտքեր	22,040	35,725
Հիմնական միջոցների օտարումից մուտքեր	42,480	-
Ստացված տոկոսներ	16,585	20,496
	81,105	56,221
Փոխառությունների տրամադրումից ելքեր	(27,238)	(58,547)
Հիմնական միջոցների ձեռքբերման գծով վճարումներ	(459,736)	(400,351)
Այլ կազմակերպություններում ներդրումներից ելքեր	(24,900)	-
	(511,874)	(458,898)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսք	(430,769)	(402,677)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Վարկի ստացում	-	605,239
	-	605,239
Վարկի մարում	(102,556)	(374,231)
Վարկի տոկոսների մարում	(58,639)	(35,499)
Վարձակալական պարտավորության գծով ելքեր	(32,330)	(23,481)
Վարձակալական պարտավորության տոկոսի մարում	(1,453)	(4,988)
Բաժնեմասի հետգնում	-	(287,178)
Շահաբաժինների վճարումներ	(65,567)	(7,441)
	(260,545)	(732,818)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(260,545)	(127,579)
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	(230,768)	599,754
Արտաբժույթի փոխարժեքային տարբերություններ	(30,427)	(18,867)
Դրամական միջոցներ տարեկզբի դրությամբ	1,052,858	471,971
Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ	791,663	1,052,858

11

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 30-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Արման Բաբոյան
Տնօրեն

Սուսաննա Գևորգյան
Գլխավոր հաշվապահ



«ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ
Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	Կանոնա դրական կապիտալ	Հետգնված կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
		հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2021թ.		3,566,112	(287,185)	2,051,430	5,330,357
Տարվա շահույթ		-	-	282,012	282,012
Շահաբաժիններ	12.2	-	-	(100,000)	(100,000)
Կանոնադրական կապիտալի ավելացում		613,580	-	(613,580)	-
Կանոնադրական կապիտալի նվազեցում		(199,709)	199,709	-	-
Բաժնեմասի հետգնում		-	(73,908)	-	(73,908)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.		3,979,983	(161,384)	1,619,862	5,438,461
Մնացորդն առ 1 հունվարի 2021թ.		3,566,112	(7)	1,227,408	4,793,513
Տարվա շահույթ		-	-	831,659	831,659
Շահաբաժիններ		-	-	(7,637)	(7,637)
Հետգնված բաժնեմասի վաճառք		-	(287,178)	-	(287,178)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2021թ.		3,566,112	(287,185)	2,051,430	5,330,357

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 30-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Արման Բաբլոյան
Տնօրեն

Սուսաննա Գևորգյան
Գլխավոր հաշվապահ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկություններ	11
2. Պատրաստման հիմունքներ	13
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ.....	15
4. Ֆինանսական գործիքներ	16
5. Հիմնական միջոցներ.....	21
6. Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	23
7. Տրված փոխառություններ	23
8. Պաշարներ	23
9. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	24
10. Ավանդներ	25
11. Դրամական միջոցներ	25
12. Կանոնադրական կապիտալ.....	25
13. Վարկեր.....	26
14. Շնորհ	27
15. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	27
16. Շահութահարկ	27
17. Հասույթ.....	29
18. Ծախսերը ըստ բնույթի	30
19. Այլ եկամուտ	31
20. Ֆինանսական եկամուտ և ծախսեր	31
21. Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում.....	32
22. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր.....	32
23. Պայմանական դեպքեր.....	33
24. Գործարքներ կապակցված կողմերի հետ	34
25. Իրական արժեքի չափման բացահայտումներ	36
26. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ.....	36

1. Ընդհանուր տեղեկություններ

«ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (Ընկերություն) հանդիսանում է վերանվանված «Արաբկիր» բժշկական համալիր ՍՊԸ-ի իրավահաջորդը:

21.01.2004թ. ընդհանուր ժողովի որոշման հիման վրա «Արաբկիր» բժշկական համալիր ՍՊԸ-ն վերանվանվել է «Արաբկիր» բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ ՍՊԸ-ի:

«Արաբկիր» բժշկական համալիր ՍՊԸ-ն ստեղծվել է ՀՀ Կառավարության 2002թ. սեպտեմբերի 12-ի «Հանրապետական մանկական կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի վերակազմակերպելու մասին թիվ 1536-Ն և «Արաբկիր բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի մասնակիցների 2003թ. հունվարի 27-ին կայացած արտահերթ ընդհանուր ժողովի որոշումների համաձայն՝ «ՀՀ առողջապահության նախարարության Հանրապետական մանկական կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ն (գրանցման թիվ՝ 264.140.00128, պետական գրանցման վկայական՝ 01 Ա 001156) «Արաբկիր բժշկական կենտրոն» ՍՊԸ-ին միացնելու ձանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

31.12.2022թ. դրությամբ Ընկերության մասնակիցներն են.

Հ/Հ	Մասնակցի անունը, ազգանունը (անվանումը)	բաժնեմասը (դրամ)	բաժնեմասի չափը
1	«Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ	1,718,807,151	43.19%
2	Մանուշակ Երիցյան	648,257,696	16.29%
3	Սերգեյ Բաբլոյան	481,584,654	12.10%
4	Արման Բաբլոյան	481,584,654	12.10%
5	«ԱՆՄԻՋԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ»	94,460,770	2.37%
6	Նինա Արիկյանց	85,179,968	2.14%
7	Աշոտ Սարգսյան	85,179,968	2.14%
8	Մարինա Փափազյան	66,957,388	1.68%
9	Խաչատուր Քյուրքչյան	16,357,944	0.41%
10	Գայանե Հենրիկի Ազատյան	82,594,904	2.08%
11	Սահակ Առաքելյան	46,319,256	1.16%
12	Կարապետ Շաքարյան	45,239,684	1.14%
13	Կարլեն Ղուշյան	36,346,991	0.91%
14	Սպարտակ Ղազարյան	10,679,280	0.27%
15	Բիայնա Սուխուդյան	3,961,283	0.10%
16	Աստղիկ Բաղդասարյան	2,683,233	0.07%
17	Հետ գնված բաժնեմաս «ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ	73,907,395	1.86%
	Ընդամենը	3,980,102,218	100%

Ընկերության գործունեության հիմնական տեսակն է բժշկական օգնության կազմակերպումը, հիվանդանոցային և արտահիվանդանոցային (ամբուլատոր) գործունեությունը, այդ թվում՝

- մարդու առողջության պահպանմանը, հիվանդությունների հայտնաբերմանը, կանխարգելմանն ու բուժմանն ուղղված գործունեության իրականացում,
- երեխաների, դեռահասների և երիտասարդների հիվանդությունների հայտնաբերմանն ու բուժմանն ուղղված գործունեության իրականացում,
- բնակչության ֆիզիկական, մտավոր, լսողական, հոգեբանական և սոցիալական վերականգնողական գործունեության իրականացում,
- երեխաների և դեռահասների առողջության պահպանմանը, հիվանդությունների հայտնաբերմանը և բուժմանն ուղղված կազմակերպչամեթոդական ու գիտահետազոտական գործունեության իրականացում,
- ձեռնարկությունների և կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի սահմաններում անհրաժեշտ ամբուլատոր և ստացիոնար բժշկական օգնության իրականացում իրեն պատկանող կառույցներում ու ստորաբաժանումներում,
- առողջապահական ժամանակակից մոտեցումների, ուղեցույցների, ստանդարտների, բուժական, ախտորոշիչ մեթոդների մշակում, ուսուցում և ներդրում ինչպես իր կողմից ստեղծված ստորաբաժանումներում, այնպես էլ այլ առողջապահական և բժշկական հաստատություններում,
- պաթոմորֆոլոգիական ախտորոշիչ ծառայություն՝
 - հիվանդությունների ճշտված ախտորոշումը՝ սեկցիոն (աուտոպսիոն), վիրահատական և բիոպսիոն նյութի հետազոտման միջոցով,
 - բուժող բժիշկների հետ ախտորոշիչ և բուժական աշխատանքի վերլուծում,
 - կլինիկաախտաբանական կոնֆերանսների կազմակերպում,
 - հայտնաբերված սուր վարակիչ և հատուկ վտանգավոր հիվանդությունների մասին առողջապահության մարմիններին շտապ տեղեկացում:

Ընկերության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 30:

Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Հայաստանի Հանրապետության քաղաքական դաշտը բնութագրվում է որպես անկայուն, մասնավորապես՝ 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի, ընդդեմ Արցախի հանրապետության, սանձազերծած պատերազմից հետո: Քաղաքական և տնտեսական ճգնաժամերի էական նախադրյալները իրենց հերթին բերում են ներդրողների ընդհանուր տրամադրվածության նվազման և ֆինանսական շուկաներում անորոշությունների և տատանումների ավելացման:

ՀՀ տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի նաև Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, քանի որ Ռուսաստանի Դաշնությունից դեպի ՀՀ տեղի են ունենում դրամական միջոցների զգալի հոսքեր: Հետևաբար տարածաշրջանում պահպանվող քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, արժեթղթերի շուկայի անկայունությունը, սուր գնաճը և ՌԴ առջև ծառացած այլ ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ ՀՀ տնտեսության վրա:

Այսպիսի գործարար միջավայրն էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Ընկերության գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, այդուհանդերձ, ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից, Ղեկավարությունը հնարավորություն չունի

արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա:

COVID-19: 2020թ. մարտին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը COVID-19-ի համաճարակը որակեց որպես համաշխարհային համավարակ: Ի պատասխան համավարակի՝ ՀՀ իշխանությունների կողմից ձեռնարկվել են COVID-19-ի տարածման և ազդեցության զսպման ուղղված մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են՝ ճանապարհորդության արգելքները և սահմանափակումները, կարանտինը, ինքնամեկուսացումը, գործարար գործունեության սահմանափակումները: Վերոնշյալ միջոցառումների մի մասը հետագայում մեղմացվել է, իսկ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանափակումներ գրեթե չկային: Սակայն կար ռիսկ, որ կարող են լրացուցիչ սահմանափակումներ կիրառվել հետագա ժամանակաշրջաններում՝ վիրուսի նոր տեսակների ի հայտ գալով պայմանավորված:

Ներկայիս տնտեսական իրավիճակի հետագա հետևանքները և Կառավարության ձեռնարկվելիք միջոցառումները դժվար է կանխատեսել, և Ընկերության դեկլարարության ներկայիս ակնկալիքները և գնահատականները կարող են տարբերվել փաստացի արդյունքներից:

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ-ներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 26-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության ֆունկցիոնալ արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա. 2022թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ:

ՖՀՄՍ տարեկան բարեփոխումներ 2018-2020. 2020 թվականի մայիսին ՀՀՄՍԽ թողարկեց նվազ կարևորության փոփոխություններ ՖՀՄՍ 1. «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրում», ՖՀՄՍ 9. «Ֆինանսական գործիքներ», ՀՀՄՍ 41 «Գյուղատնտեսություն» ստանդարտներին և ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ» ստանդարտին ուղեկցող լրացառական օրինակներում:

ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» (Փոփոխություն – Անբարենպաստ պայմանագրեր – Պայմանագիրը կատարելու ծախսեր). 2020 թվականի մայիսին ՀՀՄՍԽ թողարկեց ՀՀՄՍ 37-ի լրացումներ՝ ավելացնելով 68A պարագրաֆը՝ պայմանագիրը որպես անբարենպաստ պայմանագիր ճանաչելիս գնահատման ընթացքում ներառվող ծախսերը որոշակիացնելու նպատակով: Ակնկալվում է, որ այս փոփոխությունների արդյունքում ավելի մեծ քանակությամբ պայմանագրեր կհամարվեն անբարենպաստ, քանի որ փոփոխությունները ընդլայնում են այն ծախսերի շրջանակը որոնք ներառվում են անբարենպաստ պայմանագրերի գնահատման մեջ:

ՀՀՄՍ 16 Հիմնական միջոցներ (Փոփոխություն – Նախքան նպատակային նշանակությամբ օգտագործում ստացվող մուտքեր). 2020 թվականի մայիսին ՀՀՄՍԽ թողարկեց ՀՀՄՍ 16 փոփոխություններ, որոնք արգելում են ընկերություններին ակտիվը օգտագործման նախապատրաստելու ընթացքում ստացվող մուտքերի նվազեցումը համապատասխան հիմնական միջոցների սկզբնական արժեքից: Փոխարենը, ընկերությունները պետք է ճանաչեն համապատասխան մուտքերը վաճառքներից և դրանց վերաբերվող ծախսերը եկամուտների և ծախսերի կազմում և ոչ թե նվազեցնեն գույքի սկզբնական արժեքից:

բ. Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՀՀՄՍ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

ՀՀՄՍ 17 Ապահովագրական պայմանագրեր: ՀՀՄՍ 17 ներկայացրեց ապահովագրական պայմանագրերի հաշվառման միջազգայնորեն հետևողական մոտեցում: Նախքան ՀՀՄՍ 17 ամբողջ աշխարհով առկա էին նշանակալի տարբերություններ, որոնք կապված էին ապահովագրական պայմանագրերի հաշվառման և բացահայտումների հետ, քանի որ ՀՀՄՍ 4 թույլատրում էր նախքինում կիրառվող բազմաթիվ (ոչ ՀՀՄՍ) մոտեցումների կիրառման շարունակություն: ՀՀՄՍ 17-ի կիրառման արդյունքում նշանակալի փոփոխություններ կպահանջվեն բազմաթիվ ապահովագրական ընկերությունների համար, առաջ քաշելով գոյություն ունեցող համակարգերի և ընթացակարգերի ճշգրտումներ: Նոր ստանդարտը դիտարկում է ապահովագրական պայմանագրերը որպես ֆինանսական գործիքի և ծառայության մատուցման պայմանագրերի, որոնց զգալի մասը ժամանակահատվածի ընթացքում էապես փոփոխվող հասույթ է գեներացնում համադրություն: Այսպիսով այն հետևյալ մոտեցումներն է որդեգրում.

- Միաձուլում է ապագա դրամական հոսքերի ներկա չափումը շահույթը պայմանագրով մատուցվող ծառայությունների մատուցման ժամանակի ընթացքում ճանաչման հետ

- Ներկայացնում է ապահովագրական ծառայությունների արդյունքների (ներառյալ ապահովագրական հասույթը) տարանջատումը ապահովագրության ֆինանսական եկամուտներից և ծախսերից, և

- Պահանջում է կազմակերպությունից կատարել հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն յուրաքանչյուր պորտֆելի մասով առ այն, թե ճանաչել արդյոք ապահովագրության ֆինանսական եկամուտները և ծախսերը ամբողջությամբ եկամտի և ծախսերի կազմում, թե որոշները ճանաչել այլ համապարփակ արդյունքի կազմում: ՀՀՄՍ 17 թողարկումից հետո կատարվել են փոփոխություններ և կիրառման ժամկետի հետաձգումներ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումներ (ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ Գործնական Հայտարարության 2 փոփոխություն): 2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԽ թողարկեց ՀՀՄՍ 1 փոփոխություն, որը փոփոխեց հաշվապահական հաշվառման քաղաքականության վերբերվող բացահայտման պահանջները «Նշանակալի հաշվապահական հաշվառման քաղաքականությունից»՝ «հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվության»: Փոփոխությունները պարունակում են ուղեցույց այն մասին, թե որ դեպքերում է, որ հաշվապահական հաշվառման վերաբերյալ տեղեկատվությունը հավանական է, որ կդիտարկվի էական: ՀՀՄՍ 1 փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ին կամ ավելի ուշ սկսվող ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է նաև վաղ կիրառումը: Քանի որ ՀՀՄՍ Գործառնական հայտարարությունները ոչ պարտադիր ուղեցույցներ են, ՀՀՄՍ գործնական հայտարարություն 2-ի համար ուժի մեջ մտնելու պարտադիր ամսաթիվ սահմանված չէ:

Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8 փոփոխություն): 2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԽ թողարկեց ՀՀՄՍ 8 փոփոխություն, որի միջոցով ՀՀՄՍ 8-ում ավելացվեց հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանումը: Փոփոխությունները պարզաբանեցին նաև, որ մուտքային տվյալների և չափման մեթոդների փոփոխությունները նույնպես համարվում են

հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխություն, բացառությամբ այն դեպքերի երբ դրանք հանդիսանում են նախորդ տարիների սխալի ուղղման արդյունք:

Վարձակալության գծով պարտավորություն «Վաճառք և հետագա վարձակալության» դեպքում (ՖՀՄՍ 16 փոփոխություն): ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտեն 2020 թվականի հունիսին թողարկել է օրակարգային որոշում՝ Վաճառք և հետագա վարձակալություն փոփոխական վճարների պարագայում: Այս խնդիրը հասցեագրվել է ՀՀՄՍԻ մի քանի առումներով: ՀՀՄՍԻ-ն թողարկել է վերջնական փոփոխությունները 2022 թվականի սեպտեմբերին: Փոփոխությունները պահանջում են վաճառող-վարձակալից որոշել «վարձակալության վճարները» կամ «վերանայված վարձակալության վճարները» այնպես, որ վաճառող-վարձակալը չճանաչի որևիցե օգուտ/վնաս, որը վերաբերվում է իր կողմից պահպանվող օգտագործման իրավունքին:

ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» (Փոփոխություն – Պարտավորությունների՝ որպես ընթացիկ կամ ոչ-ընթացիկ ներկայացում): 2020 թվականի հունվարին ՀՀՄՍԻ թողարկեց ՀՀՄՍ 1՝ պարտավորությունների՝ որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգում փոփոխությունը, որը հետագայում մասամբ փոփոխվեց 2022 թվականի հոկտեմբերին թողարկված «Սահմանափակող դրույթներով (կոմենանտներով) ոչ ընթացիկ պարտավորություններ» փոփոխությամբ: Փոփոխությունները պահանջում են, որպեսզի ընկերության՝ պարտավորության մարման հետաձգման իրավունքն հաշվետու ժամանակաշրջանից հետո առնվազն 12 ամսվա ընթացքում, պետք է ունենա իմաստ և առկա լինի հաշվետու ամսաթվի դրությամբ: Պարտավորության դասակարգման վրա ազդեցություն չի թողնում ընկերության՝ պարտավորության մարման հետաձգման իրավունքից հաշվետու ժամանակաշրջանից հետո առնվազն 12 ամսվա ընթացքում օգտվելու հավանականությունը: COVID-19 համավարկի արդյունքում Խորհուրդը հետաձգել է փոփոխության կիրառումը մեկ տարով՝ մինչև 2024 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» (Փոփոխություն – Սահմանափակող դրույթներով (կոմենանտներով) ոչ-ընթացիկ պարտավորություններ). Պարտավորությունների՝ որպես ընթացիկ կամ ոչ-ընթացիկ ներկայացում փոփոխությանը հաջորդիվ, ՀՀՄՍԻ ՀՀՄՍ 1 լրացուցիչ փոփոխություններ թողարկեց 2022 թվականի հոկտեմբերին: Եթե ընկերության՝ մարման հետաձգման իրավունքը կապվում է որոշակի պայմաններին համապատասխանության հետ, նման պայմանները ազդում են հաշվետու ամսաթվի դրությամբ հետաձգման իրավունքի առկայության վրա այն դեպքում, եթե ընկերությունը պետք է ապահովեր նշված պայմաններին համապատասխանությունը մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակահատվածը, կամ դրա դրությամբ և չեն ազդում՝ եթե պայմանների համապատասխանությունն պետք է ապահովվի հաշվետու ամսաթվից հետո: Փոփոխությունները նաև պարզաբանում են «մարում» եզրույթի իմաստը՝ պարտավորությունների ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման նպատակով:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

Գնահատումներ և ենթադրություններ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերջինիս օգտագործման ժամկետի գնահատումն է (ի տարբերություն դրա գոյատևման ժամկետի): Հիմնական միջոցների միավորների օգտակար ծառայության ժամկետների գնահատումը դատողության հարց է, որը հիմնված է նման ակտիվների փորձի վրա: Ղեկավարությունը գնահատում է մնացած օգտակար ծառայության ժամկետները ըստ ակտիվների ընթացիկ տեխնիկական վիճակի և գնահատված ժամանակահատվածի, որի ընթացքում ակնկալվում է, որ ակտիվները կազմակերպության համար տնտեսական օգուտներ կբերեն: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են լինել էականորեն տարբեր:

Առևտրային դեբիտորական պարտքերի վճարունակության ակնկալվող կորուստներ - ծնթ. 9

Դեբիտորական պարտքի ակնկալվող կորստի պահուստի դրույքները որոշվել են՝ հաշվի առնելով Ընկերության նախորդ տարիների կորստի վիճակագրությունը և հաճախորդների վրա ազդող ընթացիկ և ակնկալվող մակրոտնտեսական ցուցանիշները: Առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են՝ ըստ նմանատիպ առևտրային պարտքերին բնորոշ ռիսկայնության:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չձգրտված)
- Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից
- Մակարդակ 3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

Կազմակերպությանը պատկանող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հավասարվում է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ գեղչման ազդեցությունը աննշան է:

4. Ֆինանսական գործիքներ

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ
- Արտարժույթային ռիսկ
- Այլ գնային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր,
- Տրված փոխառություններ,
- Դրամական միջոցներ,
- Ավանդներ,
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր,
- Վարկեր,
- Վարձակալության գծով պարտավորություն

(բ) Ֆինանսական գործիքներ կատեգորիաներով

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին.

Ֆինանսական ակտիվներ

	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	
	2022թ.	2021թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր	163,548	310,363
Տրված փոխառություններ	221,364	49,919
Ավանդներ	247,443	243,552
Դրամական միջոցներ	791,663	1,052,858
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	1,424,018	1,656,692

Ֆինանսական պարտավորություններ

	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	
	2022թ.	2021թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Վարկեր	519,617	622,173
Վարձակալության գծով պարտավորություն	-	30,237
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	212,396	131,444
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	732,013	783,854

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցները, առևտրային դեբիտորական պարտքերը, տրված փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, վարկերը և վարձակալության գծով պարտավորությունը:

Դրամական միջոցների, առևտրային դեբիտորական պարտքերի, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի, տրված փոխառությունների, վարկերի և վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Ծանոթագրություն 25-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերի իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Ընկերության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ընկերության առևտրային դեբիտորական պարտքը ներկայացնում է բուժօժանդությունների դիմաց ստացվելիք գումարները՝ հիմնականում Պետական առողջապահական գործակալությունից ստացվելիք գումարները: Ընկերությունը դեբիտորական պարտքի գծով երաշխիք չի պահանջում:

Ընկերությունը որոշում է պարտքային ռիսկի կոնցենտրացիան՝ ամսական կտրվածքով անցկացնելով առևտրային դեբիտորական պարտքերի ժամկետայնության վերլուծություն:

Առևտրային դեբիտորական պարտքերի վերաբերյալ հետագա բացահայտումները ներկայացված են Ծանոթագրություն 9-ում:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժույթային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտարժույթային փոխարժեքի (արտարժույթային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Իրական արժեքի և դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ

Ընկերության դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկն առաջանում է փոփոխական տոկոսադրույքով երկարաժամկետ փոխառություններից: Ընկերությունը չունի ստացված փոխառություններ՝ փոփոխական տոկոսադրույքով:

Արժույթային ռիսկ

Արժույթային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Արժույթային ռիսկին Ընկերության հակվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված առևտրային գործարքների, ճանաչված ակտիվների և պարտավորությունների հետ:

«ԱՐԱՐԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գուտ ենթարկվածությունը արտարժույթային ռիսկին ներկայացված է ստորև

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Զուտ արտարժույթային ֆինանսական ակտիվներ		
ԱՄՆ դոլար	138,271	168,097
Ընդամենը գուտ ենթարկվածություն	138,271	168,097

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 5% արժևորումը (այլ տվյալների անփոփոխ մնալու դեպքում) կհանգեցնեք տարվա արդյունքի և գուտ ակտիվների ավելացմանը՝ 6,913 հազար դրամի չափով (2021թ.՝ 8,405 հազար դրամի չափով), իսկ 5% արժեզրկման ազդեցությունը՝ տարվա արդյունքի և գուտ ակտիվների նվազմանը՝ նույն չափով:

Այլ գնային ռիսկ

Գնային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են շուկայական գների փոփոխության արդյունքում (բացի տոկոսադրույթային և արժույթային ռիսկերից առաջացողներից): Ղեկավարությունը գնահատում է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը էականորեն չի տարբերվում նրանց ընթացիկ արժեքից:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, երբ Ընկերությունը դժվարություններ է ունենում այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են՝ դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելով:

Ընկերության ղեկավարությունը շարունակական մոնիտորինգ է իրականացնում Ընկերության իրացվելիության գծով՝ ապահովելու համար գործառնական գործունեության համար անհրաժեշտ դրամական միջոցների առկայությունը:

Ընկերությունը չունի ածանցյալ ֆինանսական պարտավորություններ:

